«Կանանց Տեղեկատվական-Վերլուծական ցանց» ՀԿ
“Women's Information-Analytical Network” NGO

Երևան, Թումանյան 11a/58 Հեռ. 374-91- 51-50-84 Էլ. Փոստ. womennetam@gmail.com

16.10.2023թ.

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարությանը
WomenNet.am կայքի հիմնադիր՝
«Կանանց Տեղեկատվական-Վերլուծական ցանց» ՀԿ-ից

Տեղեկատվություն ստանալու հարցում

Խնդրում ենք «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ու ժամանակահատվածում պատասխաններ տրամադրել մեզ հետևյալ հարցերի շուրջ.

1. 2023 թ. հոկտեմբերի 15-ի դրությամբ քանի՞ համայնք կա Հայաստանում: Դրանցից քանի՞սն են չխոշորացված: Խնդրում ենք նշել համայնքների թիվը՝ ըստ մարզերի:
2. 2023 թ. հոկտեմբերի 15-ի դրությամբ Հայաստանի համայնքների ավագանիներն ընդհանուր առմամբ քանի՞ անդամներ ունեն, նրանցից քանի՞սն են կանայք:
3. Ինչպիսի՞ն են ավագանիներում կանանց ներկայացվածության ցուցանիշներն ըստ մարզերի:
4. 2023 թ. հոկտեմբերի 15-ի դրությամբ համայնքների ղեկավարներից քանի՞սն են կանայք: Հանրապետության ո՞ր համայնքներն են կանայք ղեկավարում:
5. 2023 թ. հոկտեմբերի 15-ի դրությամբ համայնքների ղեկավարների տեղակալներից քանի՞սն են կանայք:
6. 2023 թ. հոկտեմբերի 15-ի դրությամբ քանի՞ վարչական ղեկավարներ կան Հայաստանում, նրանցից քանի՞սն են կանայք: Ո՞ր բնակավայրերի վարչական ղեկավարներն են կանայք: Այս տվյալները նույնպես խնդրում ենք ներկայացնել ըստ մարզերի:
7. Խնդրում ենք նաև նշել, ներառելո՞ւ են ներկայացվող վերը նշված տվյալները Երևանի վերջին՝ 2023 սեպտեմբերի 17-ին կայացած ընտրությունների արդյունքները:

Կանխավ շնորհակալ ենք համագործակցության համար:

Թամարա Հովնաթանյան,

«Կանանց տեղեկատվական-վերլուծական ցանց» ՀԿ, նախագահ;
WomenNet.am կայքի գլխ. խմբագիր

Yerevan, Tumanyan 11a/58. Tel. 374- 91- 51-50-84 E.mail. womennetam@gmail.com